

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ
ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

- Գ. Մինասյան ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Մինասյան ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
- Ա. Ղարիբյան ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
- Վ. Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարար
- Դ. Սարգսյան ՀՀ ֆինանսների նախարար
- Ս. Կարապետյան ՀՀ գյուղատնտեսության նախարար
- Դ. Դումանյան ՀՀ առողջապահության նախարար
- Ա. Ղազարյան Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ (համաձայնությամբ)
- Բ. Ենգիբարյան Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն
- Ա. Հարությունյան «Հայ գինեգործների միություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ս. Բեկիրսկի «Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության գործատուների միություն» ՀԿ-ի համանախագահ (համաձայնությամբ)
- Ա. Ուդումյան Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի գործադիր տնօրեն
- Ս. Զաքարյան «Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն (համաձայնությամբ)
- Ա. Սալաթյան «Նեյշնլ Ինստրումենտս Արմենիա» ընկերության տնօրեն (համաձայնությամբ)

Ա. Պետրոսյան	«ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության նախագահ (համաձայնությամբ)
Ս. Մաթևոսյան	«Լիկվոր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Հրավիրվածներ՝	
Տ. Կարապետյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Խուդոյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Եգանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
Հ. Միրզոյան	Արդյունաբերության զարգացման հիմնադրամի տնօրեն
Ժ. Արամյան	Գինեգործության և կոնյակագործության ոլորտային քարտուղար
Ս. Հովհաննիսյան	«Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

1. «Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարության» «Հայաստանում կոշիկի արտադրության զարգացման ռազմավարության», դրանց իրականացումն ապահովող «Թեթև արդյունաբերության ոլորտի 2014-2016թթ. գործողությունների ծրագրի» քննարկում և հաստատում

(Ս. Հովհաննիսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության ներկայացուցիչ Ս. Հովհաննիսյանին կաշվի հումքի հետ կապված բոլոր հաշվերկները ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն.

2) առաջարկել ՀՀ ԱԺ-ի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գ. Մինասյանին, համագործակցելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության մասնագետների հետ, հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և ներկայացնել արտադրական նմուշների ներմուծման համար որոշակի արտոնություններ սահմանելու վերաբերյալ առաջարկություն.

3) հավանություն տալ Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարությանը, Հայաստանում կոշիկի արտադրության զարգացման ռազմավարությանը, դրանց իրականացումն ապահովող Թեթև արդյունաբերության ոլորտի 2014-2016 թվականների գործողությունների ծրագրին:

2. Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի 2012-2015 թվականների գործողությունների ծրագրում կատարված փոփոխությունների քննարկում և հաստատում

(Ա. Եգանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի 2012-2015 թվականների գործողությունների ծրագրի փոփոխված տարբերակին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ